**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**իրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԵԱ-ԷԱՃԾՁԲ-25/59**

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կարիքների համար տպագրական և առաքման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ԷԱՃԾՁԲ-25/59 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով իրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) իրավերի Հավելված 1-ով ներկայացվող «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ»-ը անհրաժեշտ է ներկայացնել նոր խմբագրությամբ:

**Փոփոխության նկարագրություն:** Գնման ընթացակարգի իրավերի Հավելված 1-ով ներկայացվող «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ»-ը շարադրվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ.

- Ցուցանակները նախատեսված են ուղևորափոխադրող տրանսպորտային միջոցներում երթուղու համարը և ուղղությունը ցուցադրելու համար: Պետք է ապահովեն հեռավորությունից լավ տեսանելիություն, երկարատև օգտագործման դիմացկունություն և հեշտ կիրառելիություն: Տպագրությունը պետք է լինի ջրադիմացկուն և արևի ճառագայթներից չխամրող: Նախկին ցուցանակների ապամոնտաժումը և նոր ցուցանակների տեղադրումը իրականացնում է մատակարար կազմակերպությունը իր միջոցների հաշվին: Ըստ պատվիրատուի պահանջի ամեն անգամ հայտը-պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: Տպագրությունը պետք է լինի UV տեսակի տպագրություն: Երթուղիների բացվածքը սկզբնակետից վերջնակետ տրամադրելու է պատվիրատուն (թվով 76 երթուղի լուսանկարի տարբերակով, իսկ տեքստերի պատրաստումը և տպագրությունը իրականացնելու է մատակարար կազմակերպությունը: Քանակները համարվում են առավելագույն: Քանակի չմատակարարված մասով պատվիրատուն չի կրում պատասխանատվություն: Դիզայնը համապատասխան կից ներկայացվող նկարների:

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Առաքելյանին:

Հեռախոս՝ +374 98 389 689 (ներքին հեռախոսահամար՝ 06)
Էլ. փոստ՝ s.melkonyan@promotion.am
Պատվիրատու՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ